

# Բ Ա Չ Մ Ա Վ Է Պ

## Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

### Հ Ա Ն Դ Ի Ս Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

#### Բ Ն Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

#### ԿՈՎԿԱՍՈՒ ԵՒ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Օրագրիս 1875 տարւոյ Ա և Բ Պրակայ մէջ քաղուածով հրատարակեցինք Ռատտէ Գերմանացի բնակողք աշխարհագրին նոր քննութիւններն 'ի կողմանս ինչ Հայաստան աշխարհիս: Հեղինակն իբրև բովանդակութիւն մ'ի բաղմամեայ քննութեանց՝ անցեալ տարւոյ (1874) սկիզբը հրատարակեց կամ թոյլ տուաւ հրատարակելու 'ի կոթեմ, Գերմանիոյ ամենէն հռչակաւոր աշխարհագրական Օրագրին մէջ (որ և ամենայն նման օրագրաց մէջ կատարելագոյն կը համարուի.) Չորս ծանօթութիւններ կովկասային գաւառաց վրայ՝: ա. Երկրին բնական դիրքն և ձևն: բ. Գործարանաւոր արարածք (կամ աշխարհ): գ. Անգործարան արարածք: դ. Այժման բնակիչք երկրին: Յայտնի է որ հիմա կովկասային աշխարհի մաս մը համարուի՝ մեր Հայոց աշխարհին այն մասն ալ որ Ռուսաց իշխանութեան տակ է, և է Հայաստանի հիւսիսային արևելեան մասն: Ռատտէի տեսութիւններէն համառօտիւ և ընտրանք կը քաղեմք աւելի այս մեր

հայրենեաց մասին վրայ յիշածները՝ քան ընդհանուր կովկասի վրայ ըսածները, յիշելով միայն զայն տեղուանքն ուր հարկաւ բաղդատութիւն կ'ըլլայ մեր բնիկ և օտար երկիրներու:

ա. Երկրիև բնական դիրքն և ձևն. — կովկասեան աշխարհն երկու զուգադիր բարձրաւանդակներով կը բովանդակի. մէկն 'ի հիւսիսակողմն, Մեծ կովկաս կոչուած՝ բարձր և երկայնաձիգ շարայարեալ լեռներով. միւսն 'ի հարաւակողմն՝ փոքր կովկաս կոչուած, որ է բարձրաւանդակն Հայոց, զասոնք իրարմէ կ'անջրպետեն, յարևելեան կողմէ՝ կուրգեա իր ստորին հովտաւն. յարևմտից՝ Ռիոն գետն. իսկ իրարու կը կապեն Մեսխաց լեռներն (Ախցխայի կողմեր), որք զվրաստան 'ի կողքեաց կը բաժնեն: Մեծ կովկասու կիրճերն կամ լեռանց միջի անցանելի տեղիքն շատ նեղ են, երբեմն հազիւ քանի մ'ոտնաչափ լայն, միանգամայն այլ շատ բարձր, սառամանեաց սահմանի մօտ. իսկ փոքր կովկասի մէջ լեռնանցքն լայն են, լեռանց բոլորածև կոնակներն՝ ծովու երեսէն միայն 7 կամ 8000 ոտք բարձր:

1 Vier Vorträge über den Kaukasus.

և որոշակի կը ձևացընեն խորագիր մի-  
ջոյնները. մանաւանդ երկրին կողմնա-  
կան տափերուն վրայ, ինչպէս Երաս-  
խայ և Կուրի աղբերականց կողմերը, 'ի  
հիւսիսի և յարևելեան մասին, Եփրա-  
տայ և Տիգրիսի՝ յարևմտեան և հարա-  
ւային մասին :

Փոքր Կովկասու արևելեան մասին  
կը պատշաճի Աղստե գետոյ հովիտն,  
որ միայն իբրև 1200 ոտք բարձր  
է 'ի ծովէ (գոնէ վարի կողմն), ուր  
կ'աճին մեծամեծ սօսիք և արքակաղ-  
նիք. անկէ այսդի դէպ յարևմուտք՝  
Տիլիժանայ վիճակին մէջ, որ աւելի  
բարձր է, անտառային ծառք և մինչև  
40 ոտք բարձր գիհիք: Տիլիժան աւանն՝  
Պարսկաստանէն եկող կարաւանի ճամ-  
բուն միջոց տեղն է, ուր կը դադրին  
վաճառակիր ուղտերն՝ Գեղամայ լե-  
րանց կիրճերէն անցնելով: Տիլիժանայ  
հարաւակողմը կ'աճին կնձնիք և կաղ-  
նիք, և շատ տեսակ լեռնամարգային  
վայրի ծաղկունք, ինչպէս Կողբիսեան  
բուռած շուշանն, կարմիր և մեծ մեծ  
բալավարգ (Betonica), աշլանակտուցք  
(Giranium), և այլն. բայց անտառային  
ծառք երթալով կը նուազին, վասն զի  
երկիրն ալ կը բարձրանայ: Այս բար-  
ձրաւանդակին վրայ՝ որ ինչուան 7000՝  
կը բարձրանայ, դէպ յարևելք երթա-  
լով յերևան կու գան Հայաստանի լը-  
ճերն, ինչպէս են Սևանայ ծովն, Չըլ-  
տըր-կէօլ, և աւելի հարաւակողմը  
Պաշլգ-կէօլ, 7340 ոտք (անդդիական):

Ընդարձակ և գեղեցիկ տեսարան մը  
կ'ընծայէ Տիլիժանայ անցքն. մէկ կող-  
մէն Գարապաղի (Սիւնեաց) սահման  
կտրող լեռներն, հիւսիսէն դէպ 'ի հա-  
րաւ ձգուելով, սադիս ցամաք դաշ-  
տեր, անդին Գարապաղի յուռթի հո-  
վիտները բանալով, որոց միջոցէն կ'իջնէ  
Երասխ դէպ 'ի Նախիջևան, Հարաւա-  
կողմէն կը բարձրանան Գեղամայ լեռինք  
մինչև 12000՝ գմբեթաձև գագաթամաքք,  
Աբմանիկանի լեռանց չրվանակն կոնաձև  
գլուխներով, որոց շատն մարած հրա-  
բուղիներ են. և այս հրաբոլիսային ներ-  
գործութիւնն շատ նշանաւոր կերպաւ

րանք կ'ընծայէ Հայոց երկրին. Գեղա-  
մայ ծովն ինքնին մեծ հրաբոլիսայ բա-  
ժակ մը կրնայ բուռիլ, և չորս դին  
յայտնապէս կ'երևին զուտ հրաբոլիսի  
քարինք, տոփ, լաւա, ժանգոտ ժայ-  
ռեր, և այլն: Ըստ քննութեանց Սպի-  
տայ՝ հրաբոլիսային ուժն չորս զանա-  
զան կողմ բաժնուած և տարածուած  
է 'ի Հայս, 'ի Կովկաս և 'ի Պարսկաս-  
տան, որոշ գծերով:

Գեղամայ (կամ Սևանայ) ծովուն լեռ-  
ներն այսպիսի բնութեամբ՝ 'ի հարկէ  
լեբկ և մերկ պիտի բլլան. հազիւ տեղ  
տեղ ցած ծառերով անտառաց կեր-  
պարանք մը կը նշմարուի, աւելի թուփ  
քան թէ ծառ կոչելի. լայնութեան  
40 աստիճանին կտրած 3 կամ 4 մի-  
ջօրէական աստիճանաց միջոց 'ի Հայս՝  
գրեթէ բնաւ անտառ չկայ. այլ միայն  
խոր և գոգաձև հովտաց մէջ կը գտնուին  
կաղամախք, որ շինութեան փայտի կը  
գործածուին. հիմա Երասխայ եզերքնե-  
րը ջրանցից քով խնամով կը տնկն  
ցածուկ կաղմխներ, որք շուտ աճելով  
8 կամ 10 տարուան մէջ՝ ինչուան 20  
Փրանդ կ'արժեն: — Անտառաց կամ  
ծառոց պակասութեան փոխարէն մը  
կրնայ բուռիլ մեր երկրին բուսարե-  
րութեան բարձրութիւնն, այսինքն շատ  
բարձր սահմաններ ալ հասնին, մինչև  
'ի 13000'. վասն զի 'ի Հայս սառամա-  
նեաց սահմանն ալ 3000' աւելի բարձր  
է քան 'ի Կովկաս. (այսինքն է, եթէ 'ի  
Կովկաս մինչև 'ի 10000' կրնան աճիլ  
և գտնուիլ բուսեղէնք՝ ինչուան 'ի սառն  
հասնին, 'ի Հայս՝ մինչև 'ի 13000' ալ  
կը գտնուին՝ սառն պատու դետին գրու-  
նելով): Հայաստանի փլորային (ծաղկա-  
բերութիւնն) բլորովին չի խամբիր. ա-  
րևուն ճառագայթք չոր օդուն միջէն  
սաստկութեամբ չեն զարներ Հայոց  
բարձրաւանդակները, ուր հովիւք կ'ա-  
րածեն բազմաթիւ հօտեր. և 5000է  
մինչև 8000 ոտք բարձրութեամբ կը  
մշակուին հիւսիսական արմտիք առանց  
արուեստական ուղման:

Գեղամայ ծովուն եզերքէն (6340'  
անգղ.) մինչև յերևան (3229') գետինն

3000 ոտք կը ցածնայ . բայց առաջին 30 հազարապի մղոնի (քերմէզը) միջոց միայն 600'. ըսել է իբր 80' առ մղոն<sup>1</sup>. որով բոլոր այս միջոց երկրին կերպաբանքն, բուսաբերութիւնն և կենդանիք նման են . փոփոխութիւնն կը սկսի Յամաքաղբեր (Սուխայա-Յոնդանքա) և Էլարի միջոց՝ որ է 18 մղոն . ուր ամեն մէկ մղոնի իբրև 76' կը ցածնայ երկիրն . հատ բերող բոյսը կը նուազին, խաչաձեղքն (Crocifera) ուրիշ կերպարանք կ'առնուն, կամ ուրիշ տեսակ . ինկազոտ և հովանեկաձև բոյսը կը շատնան, ինչուան րէծախի 36<sup>0</sup> տակ ալ : Այս կողմերս կը յաճախեն վայրի սարեկ թռչուններ ալ . իսկ Երասխայ միջին ընթացից հովիտքն՝ ոչ միայն անապատի կերպարանք կ'առնուն, այլ և տաք երկիրներու միջատներ և զետուններ կը բերեն, մեծամեծ կարիճներ, մամուկներ, տարանտոլ, մողիգներ, և այլն :

Այս ճամբով յառեվ երթալով երբ Ախգի գեղին իջևանը հասնինք՝ առաջին անգամ՝ յերևան կու գայ Մասիս լեռն, 82 մղոն հեռուէն, իր 16916 (անզղիա, կան) ոտք բարձր գագաթով, ուսկից ինչուան 2700' վար կ'իջնայ սառնեղէն գագաթն . իսկ առանձին տախտը կամ նստուածք սառին գտնուին տեղ տեղ մինչև ՚ի 11200' . « ինչպիսի զորմանալի հակադիր կերպարանք քանի մը քառակուսի մղոն երկրի միջոցի մէջ, Ամարդի և անհիւրընկալ անապատի քով՝ որ մարդկային ձեռաց ամենայն ջանքն ալ պարտապ կը հանէ, կ'երևին բազմաբնակ և մշակեալ ուղասիւք՝ դալար և յուսթի պարտիպաց մէջ : Հօս երասխայ եզերքը՝ հարուստ արտորայք բրնձի, իւղաբեր բոյսը և բամբակենիք . քիչ հեռու 13000' բարձրութեան վրայ ցանցառ և հազիւ մատնաչափ կոտեմք, որովք կարճատև ամառն կարծուի երկայննալ ձիւներով պատած և սուր սուր ցցուած քարածեփից խորշերը . այս գաճաճ բուսաբերութիւնն ինչուան ՚ի

1 Այս գրուածիս մէջ մղոն ըսածնիս իմանալու է մշտ փոփոք . հիպոնան իր գերմանացի մղոնը կը գործածէ, որ 2 1/2 քիլոմետրէն աւելի է :

սկիզբն յունիսի դեռ ձեանց մէջ ծածկուած էր, օգոստոսի վերջն՝ դարձեալ կը ծածկէ զայն ձմեռային ծածկութով . և սակայն այն կարճ միջոցին ալ կը ծաղկին և կը հասունանան հատիկներն . Հօս վարը՝ գիշեր ատեն օթթազին տաք երկրի տակ թռնաւոր և խատուտիկ սօյրուկա կուտած մամուկն որսի կ'ելնէ . հօն վերը կէսօրուան ատեն սառնակուտին վրայ կը վազվզէ երկայնասրունը ալպեան մամուկն փայլանգ կուտած : Հօս յերևան և յԱրալուխ՝ չուքի մէջ ալ ջերմասփին սնդիկն կը բարձրանայ մինչև ՚ի 24<sup>0</sup> րէծախի, և երբեմն ՚ի 27<sup>0</sup> . հօն ՚ի գագաթն Մասեաց օգոստոսի 20-28 ին յամի 1850, խոտըրդի քննութեանց ժամանակ, գիշերուան ժամն երեքին՝ զրոյէն 7 կամ 8 աստիճան վար կ'իջնէր, կէս օրուքն ժամ մը վերջը հաղիւ ինչուան 13<sup>0</sup> կը բարձրանար : Եւ սակայն Երևանի տարեկան միջին բարեխառնութիւնն է 8<sup>0</sup> 8' րէօմ : Արալուխի՝ որ 600' աւելի ցած է՝ 9<sup>0</sup> 7' » : Ընդհակառակն՝ Սեւ ծովու եզերքն՝ որ 3<sup>0</sup> աւելի բարձր է դէպ ՚ի բևեռն, միջին բարեխառնութիւնն է 11<sup>0</sup>-12<sup>0</sup>, և ձմեռն + 4<sup>0</sup>-5<sup>0</sup> րէօմ : մինչ յերևան՝ միջին ձմեռն - 5<sup>0</sup> 7', յԱրալուխ - 1<sup>0</sup> : Յըրտագոյն ամիսն յերևան յունուարն է, որոյ միջին ցրտութիւնն կ'ըլլայ - 12<sup>0</sup>, իսկ յերմագոյն ամիսն օգոստոս, որոյ միջին տաքութիւնն կ'ըլլայ 20<sup>0</sup> 33' . ըսել է որ մեծագոյն ցրտութեան և տաքութեան տարբերութիւնն կ'ըլլայ 40<sup>0</sup> րէծախի : Երասխայ միջին ընթացից կողմերը՝ ուր կը հասունանան բրինձ, կնիթի և արքայահատ, ձմեռը կը ստիպուին այգեաց որթերը ծածկել ու թաղել :

Հայոց բարձրաւանդակին օդոց չորութեան պատճառաւ՝ լուսոյ ներդործութիւնը ալ սաստիկ կ'ըլլան . « Կանոնաւոր հով մը կը փէ երեկոյեան դէմ Արագած լեռնէն . և երբ արեգակն խոնարհի դէպ ՚ի հորիզոն արմտեան լեռանց՝ ալ լուսոյ փայլումն չի խողովորդայս . արևուտ գունամն աւելի բարձրագոյն և աւելի մեծ կ'երևի . կը հասնի այն

վայրկեանն յորում որոյրովին կրակ կըրա՞ծ կը համարուի զերկիր, սփռելով աւոր վրայ թանձր ծիրանի գոյն մը. բոգաձև կաղամախի ծառերն կը տարածանեն երկայն երկայն շուքեր, որք քիչ ատենէն կը սկսին տառանկի, և ահա վերջապէս կը պատէ զմեզ. բայց Արարատայ ստորոտէն մինչև 'ի սահմանս սառսամանեաց դէպ յարևմուտս փոյլուն կարմրութիւն մը կը սփռի. վերջին անգամ մ'ալ լեւան գլուխն կը բորբոքի՝ յառաջ քան գիշերուան մթութեան գալը. երկնից կամարն՝ մինչև 'ի զէնիթ՝ կ'առուռ մէկ թեթև պայծառ դեղին գոյն մը, նարնջի և մանիշակի զարնոց: Յարևմտակողմն բարդող լեռին վրայ կը սահին սոյոգ մը ոսկեգոյն ծիւ ծիւ ամպոց, Գիշեր կ'իջնէ երկրիս վրայ. բայց դեռ Արարատայ շուրջ եզերքն սեւ ու սպիտակ գունով կ'որոշուին: Օդոց մէջ վեր վար կը հնչէ ուշ մնացած ճայից սուր ճիչն, մինչդեռ բուհճակք աւերակաց վրայ կը թափառին, իրենց գիշերալին վայրիկ սկսանելով. և տաքցած գետնէն կը բարձրանայ ծղրիղնեղու ճռինն »:

բ. Գործարանաւոր աշխարհ. — Կովկասի մէջ շատ յոյս չկայ նոր տեսակ յայտնաբերմն բոյսեր գտնել. բայց Հայոց բարձրաւանդակին վրայ կրնայ յուսացուիլ, թէ և չլլան բոլորովին նոր տեսակք. գրեթէ ամեն կողմ կ'երևին ալպեան, այսինքն բնիկ լեռնային բոյսք. ինչպէս որ ֆոյի և Պուսսիէ քրննեցին և նշանակեցին բարձրաւանդակին հարաւային եզերքները. այս կերպարանք բուսաբերութեան կը հասնին մինչև 'ի սահմանս Նրբաժնի Երասխայ և Եփրատայ, որ շատ հետաքննութեան արժանի տեղ է բուսաբանութեան համար. — Երասխեան գալտորու նուազ բուսաբերութեան պատճառն է ջրոյ պակասութիւն. դիտուած է որ բոլոր տարուան եկած անձրևն միջին հաշուով հազիւ 4-6 մատնաչափ կ'ըլլայ, մինչդեռ 'ի Կոլքիս՝ մինչև 63 մատնաչափ: — Մեծ կովկասու հիւսիսակողմը Ալպեան մարգագետինք գտնուին մինչև

'ի 11000'. 'ի մեծն Արարատ (Մասիս) յամին 1871 օգոստոսի 9ին գտայ այսպիսի խոտեր մինչև 'ի 12357' (անգղ.) : Էլպարուզի հիւսիսակողմը չորս տեսակ յայտնաբերմն բոյս գտայ 'ի 10 օգոստոսի (1865). Իսկ 'ի Մասիս մշտնջենաւոր սառամանեաց մտա 'ի 14200' բարձրութեան՝ երկու տեսակ դաճաճ կոտեմ: ... Ծանօթ է ամեն բուսաբանից Կոլքիսոյ առատ բուսաբերութիւնն և դալարութիւնն մինչև յ'7000' բարձրութիւն երկրի. « ոսկոյն ոչ մէկ կողմ մ'ալ չեն գտնուիր հօս սայն մեծամեծ պայծառափայլ կարմիր խնշխնաշի ծաղկունք, և բաղմթիւ գեղեցիկ ու յատկանիշ թիթեռնաձևք (Papilionacea), որք Հայոց բարձրաւանդակին նման դիրքով տեղուանքն ամառ ատեն կը զարգարեն մեծապէս վայելչութեամբ » : Բարձրաւանդակին կողմնական տափերն խոպան երկրի կերպարանք կ'ընծայեն (Steppe). աշնան ատեն կը ծածկուին տեսակ տեսակ փշաբեր բոյսերով և մկնամիրգերով (Astragalus). իրենց վայրի կենդանիներն ալ թէ և Պոնտոսի կողմանց ցեղէն են, այլ տարբեր տեսակք. փոխանակ անոր այծեմանց կամ վիթից՝ 'ի Հայս վայրի ոչ խաբք և առիւք շատ գտնուին: — Մուղանայ անապատին մէջ աւելի խիտ և առատ կ'երևին խոպանուտ երկրի բոյսք և ծաղկունք, մինչև 'ի մայիս ամիս. և թէպէտ ծաղկունք հօս աւելի պզտիկ են քան զՊոնտոսի կողմանց, բայց շատ նշանաւոր և յատկատիպ. — Հայաստանի, ինչպէս նաև Պարսկաստանի բարձրաւանդակաց զխաւոր յատկութիւն մ' է փշաբեր թփոց երկար տևողութիւնն. այսպէս թփաձև մկնամիրգն որ Մեծին կովկասի հարկ մինչև 'ի ստորոտք կը գտնուի, և 1 պոճ 2 տեսակ միայն 'ի հարաւակողմանս ճարիոց, 'ի բարձրաւանդակս Հայոց՝ որչափ դէպ 'ի հարաւ երթանք՝ այնչափ աւելի կ'աճէ: Պունկէ ռուս բուսաբանն նշանակած է 700 տեսակ մկնամիրգի, մեծ մասն յԱնդրակովկաս և 'ի Պարսկաստան. ասոնցմէ տեսակ մը անպատեան կամ

մերկ ըսուած (Astragalus denudatus) Մեծ Մասնաց հիւսիսակողմը 9000' բարձրութեան խիտ առ խիտ բուսած դարաստ մը կը ձևացընէր, երբ հեղի նակս (Ռատտէ) հօն ելաւ 'ի վերոյի չեալ թուին (1874, օգոստոսի 9) : — Պոնտոսի ափանց և կազբից ծովու սեւ գոյն խոպանաց մէջ ծաղկած բուսոց մեծ մասն կ'երևի նաև Գեղամայ ծովուն 6000' բարձր տափարակաց վրայ, հան գերձ ուրիշ յատուկ բոյսերով : Ինչպէս են գեղեցկատերև և հովանեկաձև բոխ (Ferula umbellifera) և բազմաթիւ գեղեցիկ տերեփուկ ծաղկանց (Centaurea), որ Երասխայ անջրդի կողմերը չեն գտնուիր :

Թէ՛ այս Երասխայ և թէ՛ կուր գետոյ վարի մասին հովիտքն, ինչպէս նաև կազբից ծովու եղերք աւազուտ և քարուտ անապատի կերպարանք մը կ'անունն : աղախառն բլուրներ ունին, ուր և աղա յին երկրի բոյսեր կ'աճին, բայց ջրի պակասութեան պատճառաւ՝ շատ ճոզած են, մանրիկ տերևներով, և երբեմն նաև անտերև և անկանաչ : Մկնամրգին հազիւ ոտնաչափ մը կը բարձրանայ, նոյն պէս անոր նման բոյսք ալ, որք և յունիս մասոյ մէջ բոլորովին ծաղկաթափ կ'ըլլան : փոխան ծաղկանց՝ բուսոց վրայ կը կախուին և կը զեռան մետաղափայլ միջատք և բզէզք, և երեկոյեան դէմ եղջերաւոր պատենաթիւք, որոց բոժոժք ալ նոյն մկնամրգեաց մէջ փորուած դրուած են : — Մեծ կովկասի հարաւակողմը չեն գտնուիր խոպանարոյսք, այլ միայն Հայոց բարձրաւանդակին հիւսիսային զաւ'ի վայր կողմերը : — Մշակելի բուսաբերութեան բարձրագոյն գիժն Մեծ կովկասու հիւսիսակողմը 2000' աւելի բարձր է քան զկողքեաց : Իսկ 'ի Հայոս աւելի բարձր 3-4000' : — Հայոց բարձրաւանդակին հարաւակողմը գտնուած տորոսական բոյսերն՝ գտնուին նաև 'ի հիւսիսակողմն, բայց ոչ կաղնիք մշտականաչք : Այս մեր աշխարհին բարձրաւանդալք, աղբերավայրք Երասխայ, կուրի, Եփրատայ և Տիգրիսի՝ անջրպետ կամ միջին անցք են կողքիսի եւրոպէանման բուսաբերու :

Թեան և կենդանաբերութեան, և բնիկ Ասիոյ բուսական և կենդանական բերոց, որ կը սկսին կազբից ծովու եղերքը թալիշ նահանգէն : Նոյնպէս ալ մեր աշխարհին խոպանաց փշաբեր գազք (Tragacathe), կամուրջ կամ կցորդի են նոյն ծովուն (կազբից) արևելեան եղերաց անապատներուն :

դ. Արգորճխառք աշխարհ. — Հայոց բարձրաւանդակին կոնաձև կամ սրազուլի լեռներն՝ երկար ատեն գետնին տակ հրային ներդործութեամբ խաղալէն վերջն՝ որոտալով պատուեր են երկրին երեսը և կանգնած են հրաբուլցի բերաններով : դէմադէմ կեցած Արարատն և Արագած ծիրանի ծուխեր արձակեր և բոցերով պատեր են : զեռ վազած ու պղպած լաւային ընթացքն կ'երևան, և ցայտած քարերն կը մնան : Որքան որ երկիրն հին է աւանդութեամբ մարդկան, այնքան և նոր է ըստ երկրաբանութեան : Թէպէտ հիմա լուծ են բոլոր կովկասեան աշխարհաց հրաբուլքը, այլ սասանութիւնք երկրի չեն դադրած : զեռ նոր կործանած է Շամասի, և Արտասիլ զեռ կը շարժի : շատ տարի չէ (1840) որ Արարատ փլշելով Ակուռոյ ձորահովիտը լցուց և կործանեց Ս. Յակոբայ փանքը : Պաքուի անչլջ կրակներն, սահմանաւոր ատենով վեր ցայտած տիղմերն, նաւթի աղբերքն և բազմաթիւ ջերմուկք, հանգերձ գետնի ժաժերով, կ'իմացընեն որ զեռ երկրին ընդերքն և երեսք իրարու հետ յարաբերութիւն ունին : զոր 30 տարիէ վեր կը քննէ Ապիխ երկրագետն, և կարևոր տեղեկութիւններու կը սպասեմք իրմէ :

Հարիւրէն աւելի Ձերմուռիք ծանօթք են 'ի կովկաս : այլ զխաւորքն երկուք են : Բիաթիկորպ՝ յԱյս կողմն կովկասի, Ապասթուման՝ յԱյն կողմն : երրորդ կրնան ըսուիլ Սունճայի տաք ջրերն Ձեչննաց երկրումը : կովկասայ ջրմուկաց նշանաւոր երեկոյթք են, ըստ Ապիխայ : ա շատ ցրուած ըլլալն և ոչ միայն 'ի սահման հրաբլխից : միայն երկու տեղ բուն հրաբլխից քով են, մէկն

Եփրատայ աղբերականց մօտ Թանտուր լու լեռան ստորոտը (Պայեզիսու կողմերը) . միւսն Արատիլի մօտ Սաւալան լեռին ստորոտը . — բ . Գետնին պատառուած և լեռանց դուրս ելած գծին վերայ գտնուիլն . որով մէկ գծի վրայ կ'երևին հիմայ շերտուկը, նաւթաղբերք, տղմաղբերք, և այլն :

Ախալցիխէի և մեր Տայոց ալխարհին միջոցն է վերոյիշեալ երկու գլխաւոր շերտուկաց մէկ ժողովն . որոյ մէկ մասն է մօտ 'ի Պորժոմ (2630' բարձր), ուր կողկասու փոխաբքային ամարանոցն է, հիւանդաց և զրօսասիրաց սիրուն ապաստանարան մը . երկու բժշկական շերտուկը կան հօս, մէկն կոչուի կատարինեայ աղբիւր, և կը բղխէ 'ի վայրկեանի 20 լիդր ջրոյ, 24<sup>0</sup> բէօմ. տաքութեամբ . մէկայլն 18<sup>0</sup> տաքութեամբ կը բղխէ իբրև 9 լիդր : Ասոնց բնութիւնն քննուեցաւ և գտնուեցաւ նման ջրոց վիշիի, Պուլուի և Ֆախինկէնի . ջրոց գլխաւոր աղն է նարոնն ավխաթթու . օգտակար են հիւանդութեանց՝ միշարգելութեան, թանկից, արզանդի ցաւերու, և այլն . Պորժոմէն 16 մղոն մը դէպ 'ի հարաւ, Երակվերա կոչուած գեղին քով ալ, կայ երկաթահամ աղբիւր մը 8<sup>0</sup> տաքութեամբ, 5 վայրկենի մէջ 2 լիդր բղխելով . օգտակար է արեան պակասութեան դէմ, և շիշերով ջուրը կը տանին 'ի Տփղիս . — Միւս մասն շերտուկաց է Ապասթուման, 'ի 4770' բարձրութեան, իբրև 54 մղոն հեռի 'ի Պորժոմայ . գետինն բարձրութեանը համար հիւսիսային երկրի կերպարանք մը կ'առնու . նոճեաց և եղևնեաց տակ կը տարածուին մարգեր, գեղեցիկ լեռնային ծաղկամբ և տեսակ մը անուշահոտ թփով . օղն ալ շատ առողջարար է, գիշերը ցուրտ, ցորեկը չափաւոր բարեխառնութեամբ : Ի հնուց ծանօթ էին Ապասթումանի բժշկական ջուրն . կ'առնէր տեղայիք թէ մեծին Աղեքսանդրի զօրքն հօս բժշկեր են իրենց վերքերը . նորերս ալ (1864) Ռուսք հաստատեցին հօս 200 զինուորաց բնակարան, և 40 կամ 50 տուն ալ հիւանդ

զաց համար, որք կու գան յունիս ամսէ մինչև 'ի կէս օգոստոսի : Զրոյ բնութիւնն շատ հաստատուն նիւթեր չունի, գլխաւոր ունեցածն է քլոր, նատրոն, ավխաթթու . և նման է Պիւրենեայց Գողբէի (Cauterets) և Սաուքէս էս (Aix) շերտուկաց գլխաւորապէս բուժիչ է յօղուածացաւութեան :

Նաւթ . Պաքուի անսպառ նաւթաղբերքն է անչէջ կրակն՝ ալխարհածաւտօթ են, և մեր բնիկ երկրէն դուրս ըլլալով մեք ալ զանց կ'առնենք գանոց յիշատակել . ալ միայն յիշել ընդ հեղինակին, որ ետքի առեմներս հարուստ Հայք իրենց վրայ առած էին անոնց հանքն և մենավաճառն, ինչուան 900000 արծաթ ուուպի տալով միայն մէկ հորի կամ աղբեր մը համար :

Այ . Հայաստան շատ հարուստ է աղահանօք . կողկասի ամենէն նշանաւոր աղահանքն է կողբայ գիւղին, Թաքեալ դու (Քարգոզ) լեռին ստորոտը, մօտ յերասու, 3580' բարձր յերեքաց ծովու : Աղն կարգ կարգ տարածուած է միջանկեալ հողերու տախտից մէջ . վերնագոյն կարգն 7 կանգուն թանձրութիւն ունի . քանի մը կանգուն հողերու տակ կայ երկրորդ կարգ մը 15-30 կանգուն թանձր . անկէց ալ քիչ վար երրորդ կարգ մը, որ աւելի նօսր է, և հալելով կը խառնի վարդամարգ գետակին ջրերուն : Միայն միջին մեծ կարգն է որ կը բրեն հիմայ, 280 կանգունի միջոց . բոլոր երկայնութիւն այս աղակարգին կամ խաւին է 900 կանգուն, լեռան արեմտեան ճակատը . ասոնցմէ վար՝ հիւսիսակողմը կան հին փորուած աղահանքն, որ հիմայ անգործ թողուած են . և կ'երևի թէ շատ հին ժամանակ սկսեր են հօս բրել, մինչ դեռ մե տաղական գործիք չէին բանիլ . վասն զի կը գտնուին հօս մեծամեծ քարէ կուանք առանց կոթի, միայն տափակ կողմն փոս փոս ըրած է որ դիւրաւ բռնուի . և կ'երևի թէ հեռուէն բերած են այս կուանները, որովհետև անոնց տեսակէն

քար չի գտնուիր 'ի սահմանն կողքայ . հիմա երկայն պողոզատիկ կռաններով կը կտրեն ազը նկանաձև կտորներ 30 կամ 40 հազարակրամ (քիչ) ծանրութեամբ . չորս կողմէն 7-8 մատնաչափ ծակելով և փորելով կը ձևայրենն աղքարը , և կռանով զարնելով ներքևէն կը գատեն ու կը հանեն . բայց այսպէս ընելով շատ աղ կը փչրի և կորսուի . վասն զի հաշուած է որ մէկ խորանարդ կանգունէն 350 դիր (կտոր) աղ կ'եղէ , որ կը կռեն իբր 875 բռնչ , որ է մօտ 15 հազար հազարակրամ . որոյ գրեթէ հնդին երեք մասն փչրանք է : Միջին հաշուով տարին իբրև 116000 կենդինար<sup>1</sup> աղ կը բրեն , որոց իբր վեցերորդ մասն մանր փչրած անպիտան կ'ըլլայ : — Գառսուն տարիէ վեր է որ Ռուսաց տէրութիւնն վարձու տուած է այս սղահանքը , վարձքն առ առաւելն 80000 արծաթ ուսպի է : Աղին սովորական գինն , ըստ մեծութեան կտորոցն՝ և ըստ մերձաւորութեան ծախուած տեղւոյն առ աղահանքն կը զանազանի . յերևան մէկ բռնչ աղն կ'արժէ 23 արծաթ քօփէք , իբրև Ֆրանսէ մը . փչրանքն կ'արժէ 16 քօփէք . 'ի Տիգրիս՝ բռնչն 53 քօփէք , փչրանքն՝ 48 : — Սովորաբար ուղտբու վրայ բարձած կը տանին աղը կաբաւանով :

Նախիջևանի աղահանքն տարբեր տեսակ հողերու մէջ կը գտնուի , և կողքայ պէս առատ չէ , տարին իբր (270000 բռնչ) իբր 45000 կենդինար կը հանեն . և վարձուած է 22000 արծաթ ուսպիի : Պաղդէղ . ի Հայս անուանի է Գանձակ գաւառին պաղղըի հանքն , իբր 32 մղոն տարածութեան միջոց . երկու կարգ է կրային հողոց մէջ . վերի կարգն իբր 4 կանգուն թանձրութեամբ զուտ պողելոց է , վարինն՝ խառն կիրով . բռնութեամբ նման է խալիոյ Չիվիզայ վեզգէի քաղաքին մօտ թոլֆայ տեղւոյն պողղելին : Թէպէտ և շատ հին ատեններէ սկսուած է հանել Գանձակայ պաղ .

<sup>1</sup> Կենդինար (Quintal) է 100 հազարակրամ (քիչ) : Հեղինակն այս կէտոց տեղ Ռուսաց բարդը կը գործածէ որ է 16 հազարակրամ և աւելի :

լեզն , բայց ոչ շատ գործուած . սակայն 1865ին հաստատուեցան նոր ոճով աշխատանք , և հիմա կը հանեն տարուէ տարի 30000 բռնչ , Նոյն տեղ պողղելոց զինն է 1 բռնչ (16 հազարակրամն) 1 ուսպի և 10 քօփէք , 'ի Նիժնի Նովորոտ՝ 3 արծաթ ուսպի կ'արժէ : ԻՏՏՆԱՐ . Թէպէտ և յերևան նահանգի (յՄարագած , և այլն) կը գտնուի բաւական առատ ծծուծք , այլ փրնտուած չէ :

Մեռաւայք կամ Հրանայելիք . Առատ են 'ի ստորին կովկաս , կուրի և Երասխայ միջոց , 'ի լեբինս Բամբակի , 'ի Գաւրպաղ , 'ի Խաղախ գաւառ և 'ի Սամյիլէ (Ախալցիխէ) : — Պիլնէ կը գտնուի 'ի Գարապաղ , թէ 'ի հարաւակողմն Մեղրի գետակին հովիտը , և թէ 'ի Տարաւաղը (Վայոց ձոր) 'ի հիւսիս , ուր և արծաթախառն է : Գործաւորը յոյնք են , որք իւրաքանչիւր գործանոցի մէջ տարին 4-5000 բռնչ կը հանեն , և մեծ մասն անգործ կամ խառն կը խաւրեն 'ի Պարսկաստան . 'ի Շուշի մէկ բռնչ կը ծախուի 9-11 արծաթ ուսպի : Բոլոր կովկասի Պղնձահանից տարեկան եկամուտն է 600000 արծաթ ուսպի :

Երկաթ . Թէպէտ և առատ է 'ի կովկաս բայց ոչ լաւ աշխատուած . զլխաւոր հանքն են 'ի Չալթախ՝ Բոլնիս վիճակին մէջ , իբր 80 մղոն հեռու 'ի Տիգրիսէ , արևմտեան հարաւային կողմը , ուր կ'երևին հին ատենէ բացուած մեծ բովբինչուան 3 կանգուն թանձրութեամբ երկաթի խաւք կան , որոց լաւն կուտայ  $\frac{60}{100}$  , իսկ ոչ լաւն  $\frac{50}{100}$  , ըսել է միջին հաշուով  $\frac{45}{100}$  , բայց աղէկ կանոնաւոր աշխատանք չկայ . անոր համար հիմա Պարսկաստանի երկաթուղեաց համար յԱնդղիոյ կը բերեն երկաթը , 5000 մղոն հեռուէն , մինչդեռ 'ի Չալթախայ մինչև յեզր կասպից ծովու՝ է 500 մղոն (քիլոմէտր) :

Ամենէն աղին և մետաղն՝ Ոսկի ալ բոլորովին անյայտ չէ 'ի Հայս . քանի մը տարի առաջ (1868) Արևելեան Սիպերիոյ Ոսկեհանից վերակացուն (Բլեմենէֆ) քննեց Ազատե գետոյ աղբերա .

կանց վրայ աւազանման ոսկեհատիկներ, բայց շատ նուազ ըլլալուն: ձեռք չգորկաւ ժողուելու:

դ. Ժողովուրդք կամ Ազգք. — Այս մասին հեղինակին տեսութիւնները զանց կ'ընենք, սովորական գրոյցք ըլլալով, և ոչ անծանօթ ազգայնոց իրենց վիճակը: Շատ ըլլայ ըսելն որ Բատտէ ալ կը ճանչնայ զիսաւոր ազգ 'ի Կովկասեանս զՀայս և զՎերս: և յետ յիշելու մեր ազգին հին կացութիւնը և պէտքէս քաղաքական անցքերը, կը զարմանայ անոր պնդութեան կամ ունողութեանը վրայ, այսինքն իր ազգային ոգին և տարազը պահելը, և զգուշութեամբ մը շատ կողմեր գաղթական ալ սփռելով, դեռ իր միջնաշխարհը չլծողուլը, որ է Եփրատայ և Երասխայ միջոցը: Ըստ սովորական ոճոյ կընմանցընէ զՀայս՝ Հրէից, ոչ միայն ամեն դիսփուռած ըլլալուն համար, այլ և շահի կամ վատտակի ետեւէ ընկնալուն, թող լով գեղեցիկ արուեստից և դպրութեանց մշակութիւնը: Հին ազգ է, կ'ըսէ, Հայն, այլ ոչ երբեք իբրև քաղաքական զօրութիւն մը ներգործեց օտար աշխարհի վրայ, իր երկրին մերձաւոր աշխարհակալաց հետ միացընելով իր բաղդը: Սակայն այնքան ուժով և ամփոփ է ներքին զօրութիւնն որ մինչև

չև հիմա անարատ պահեց իր սեփական բնոյթը, և նաև արտաքին կերպարանքը, իր կրօնական ծէսերն և սովորոյթքը. և հին եկեղեցեաց և շինից աւերակաց վրայ կը ցուցընէ՝ որ աստեղծ շատ լաւ կրթուած է եղեր 'ի ճարտարագիտութեան:

Սովորաբար վրացիք կրթութեան կողմանէ յետամնաց կ'ըսուին, և յիրաւի այնպէս կ'երեւին՝ Հայոց գործունէութեանը նայելով. սակայն պէտք է խոստովանիլ որ աւելի տոկուն դանդաղացան իրենց երկիրն և ազատութիւնը պահելու՝ մինչև 'ի մեր դարս:

Արուեստք և ճարտարութիւնք շատ անկատար մնացած են, թէ՛ ետեւէ չընկնալուն համար, և թէ՛ հին ոճը կամ եղանակը չփոխելուն. բայց արժանի թելով բանուածքի և միակ գործելու բաւական ճարտար են Հայք յայլնայլ քաղաքս: — Հայոց հիմակուան զխաւոր աշխատանաց և գործոց մէկն ալ է՝ շոգեշարժ մեքենաներով մետաքսահանութիւն. այսպիսի գործարաններ ունին յՈրուսաւոր և յԱզուրիս. ուր թէև աշխատողաց շատերն թաթար ըլլան, բայց ուղիւքն Հայք են, և յաջողագոյնք քան զթաթարս. այս գործարաններէն ելած մետաքսն կը զրկուի 'ի Մոսկուս և մինչև 'ի Լիոն:

### ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ

Ա. Յ. ՊԱՐԻՒԼԵԱՅ

### ԳԼՈՒԽ Ժ

Իմաստնոց վարդապետութիւնն.

«Մի է Աստուած ճշմարիտ, մի է աշխարհիս բոլոր ժողովրդոց համար. բայց իմաստուններէն զատ՝ ոչ ոք կ'ըմբռնէ իր պարզ ու անիմանալի բնութիւնը: Ռամիկն հազիւ հեռուէն նշմարելով ազօտապէս, ամպոց

մէջ երևեալ փայլատական նման, բազմացուցած կը պաշտէ՝ տալով հազարաւոր ձևեր, ու ծածկելով խորհրդական թանձր երևութից տակ, ինչպէս որ կը տրամադրէ իւրաքանչիւր ազգաց բարքն և փոփոխ ու զանազան սովորութիւններն: Մի է, այլ երեքանձնեայ. խորհուրդ մեծ և անիմանալի, սակաւուց միայն յայտնեալ, այսինքն անոնց՝ որոնք կը քննեն, կը պահպանեն ու